ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 19-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 220.1-րդ հոդվածով.

« Հոդված 220.1. Սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիմքերը

1. Սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիմքերն են՝

1) նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը,

2) դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը»:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 220.2-րդ հոդվածով.

«Հոդված 220.2. Նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը

1. Նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1) չի կիրառել այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր.

2) կիրառել է այն օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր.

3) սխալ է մեկնաբանել օրենքը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը:

2. Նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 220.3-րդ հոդվածով.

«Հոդված 220.3. Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը

1. Դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, այդ թվում՝ այնպիսի դատավորի կողմից, ով, ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել,

2) դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել նիստի ժամանակի և վայրի մասին,

3) դատական ակտը ստորագրված և կնքված չէ,

4) դատական ակտը ստորագրված և կնքված չէ այն կայացրած դատավորի կամ դատավորների կողմից,

4) դատական ակտը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ,

5) գործից բացակայում է դատական նիստի կամ առանձին դատավարական գործողության կատարման արձանագրությունը,

6) գործի քննության ընթացքում խախտվել են դատավարության լեզվին վերաբերող կանոնները,

7) գործը քննվել է ընդդատության կանոնների խախտմամբ,

8) դատական ակտը շոշափում է գործին մասնակից չդարձված անձանց իրավունքները և պարտականությունները, բացառությամբ այն դեպքի, երբ

դատարանը քննվող գործի մասին ծանուցել է տվյալ անձին, սակայն վերջինս չի ցանկացել ներգրավվել գործին,

9) հայցը բավարարվել է ոչ պատշաճ հայցվորի օգտին կամ ոչ պատշաճ պատասխանողի դեմ,

10) առկա են սույն օրենսգրքի 103-րդ հոդվածով սահմանված՝ հայցն առանց քննության թողնելու հիմքերը, կամ

11) առկա են սույն օրենսգրքի 109-րդ հոդվածով սահմանված՝ գործի վարույթը կարճելու հիմքերը:

2. Բացի սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերից, դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով»:

Հոդված 5. Ուժը կորցրած ճանաչել օրենսգրքի 226-րդ հոդվածը:

Հոդված 6. Ուժը կորցրած ճանաչել օրենսգրքի 227-րդ հոդվածը:

Հոդված 7. Ուժը կորցրած ճանաչել օրենսգրքի 228-րդ հոդվածը:

Հոդված 8.Օրենսգրքի 233-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Հոդված 233. Վճռաբեկ բողոք վերադարձնելը

1. Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե՝

1) վճռաբեկ բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 231-րդ հոդվածի պահանջներին, կամ

2) վճռաբեկ բողոք ներկայացվել է օրենքով նախատեսված ժամկետից ուշ, և բացակայում է այն վերականգնելու մասին միջնորդությունը, կամ

3) մինչև վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը, բողոք բերած անձից դիմում է ստացվել այն հետ վերցնելու մասին:

2. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում՝ նշելով առկա թերությունները և սահմանելով երկշաբաթյա ժամկետ՝ թերությունները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար»:

Հոդված 9. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 233.1-րդ հոդվածով.

«Հոդված 233.1. Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը

1. Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝

1) վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է, կամ

2) բողոքը ներկայացրել է այն անձը, ով դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի, կամ

3) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման, կամ

4) սույն օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում բողոք ներկայացրած անձը ներկայացրել է բողոք, որում չի վերացրել բողոքում թույլ տրված խախտումները, կամ

5) գործին մասնակցող անձանց միջև առկա է վճռաբեկության իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնություն:

2. Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում»:

Հոդված 10. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 233.2-րդ հոդվածով.

«Հոդված 233.2 Վճռաբեկ բողոքն վարույթ ընդունելը մերժելը

1.Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է՝

1) եթե բացակայում են սույն օրենսգրքի 233-րդ և 233.1-րդ հոդվածով նախատեսված հիմքերը, և

2) եթե բացակայում են սույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը:

2.Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը»:

Հոդված 11. Օրենսգրքի 234-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 234. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը

1. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե գալիս է հետևության, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ

2) առերույթ թույլ է տրվել կոպիտ դատական սխալ, որը ազդել է գործի ելքի վրա:

2. Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, եթե՝

1) նույն հարցի վերաբերյալ առկա են ստորադաս դատարանների առնվազն երկու միմյանց հակասող դատական ակտեր, կամ

2) նույն հարցի վերաբերյալ առկա են ստորադաս դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ միմյանց հակասող դատական ակտեր, կամ

3) բողոքարկվող դատական ակտը հակասում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմանը, կամ

4) բողոքարկվող դատական ակտն հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, կամ

5) ստորադաս դատարանը հիմնվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության օրենքը, կամ

6) վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավակիրառ պրակտիկայի զարգացման խնդիր:

3. Սույն հոդվածի իմաստով կոպիտ են համարվում հետևյալ դատական սխալները՝

1) թույլ է տրվել սույն օրենսգրքի 220.3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ որևէ խախտում, կամ

2) առերևույթ թույլ է տվել նյութական նորմի ակնհայտ և էական այնպիսի խախտում, որն ազդել էր գործի ելքի վրա:

4. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում:

5. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելուց հետո վճռաբեկ դատարանը որոշմամբ կարող է կասեցնել դատական ակտի կատարումը:

6. Վճռաբեկ դատարանի որոշումները պատշաճ ձևով ուղարկվում են բողոք բերող անձին և գործին մասնակցող անձանց»:

Հոդված 12. Օրենսգրքի 241.1-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ կետը.

«5.1) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ սույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության հիմնավորումը»:

Հոդված 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: